

# ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

## ԵՒԴՈՎԻՈՅ ՄԷԶ

ԵՒԴՈՎԻՈՅ, 17 Սեպտ. 1913

Ամսոյս 15ի Կիրակի, Խաչվերացի տօնին օրը կանխաւ եղած կարգադրութեան համաձայն, քաղաքէս 4 ժամ հետու Ս. Յովհ. Ոսկերերանի վանքին մէջ տեղի ունեցաւ յօրելեանական մեծ հանդէս ի յիշատակ Հայ զիրերու գիւտի 1500 ամեակին եւ Հայ տպագրութեան 400 ամեակին, եւ ի պատիւ մասնաւորապէս առաջին Հայ տպագրիչներէն Եւդովիացի Արզար դպիրի. Հանդէսը սարքուած էր Առաջնորդարանի կողմէ կազմուած Յօրելեանական Մասնախումբին կողմէ, որուն կ'նախագահէր Առաջնորդ Գեր. Տ. Շաւարշ Ծ. Վ. Սահակեան եւ ատենապետն էր մեր հայրենակից գրագէտ Յովհ. Գազանճեան. Իսկ անդամներն էին Կարապետ Ազարեան, Լեւոն Փասպանեան, Յովհ. Թիւյսիւզեան եւ Յ. Հռեան. Մասնաւոր հրաւերով ներկայ էին Սերաստիոյ Գեր. Առաջնորդ Տ. Թորգոմ Եպիսկ. որ նախագահեց յօրելեանական հանդէսներուն. ներկայ էին նաեւ Սերաստիոյ, եւ քաղաքիս թեմերէն՝ Հէրէկի, Զիլէի ու Նիքսարի, ինչպէս նաեւ տեղական Ազգ. պաշտօնական մարմիններու եւ Հայ կուսակցութեանց կողմէ զրկուած պաշտօնական ներկայացուցիչներ, եւ Թոգատէն ու շրջակայ քաղաքներէն եւ գիւղերէն հասած հազարաւոր անձերու ստուար երկսեռ բազմութիւն մը. ի յիշատակ այս հանդէսին, պատրաստուած էր Սահակի, Մեսրոպի, Արզար դպիրի եւ վանքին պատկերները կրող զեղարուեստական ճաշակաւոր զարդ-րոսդալ մը որ հանդէսին օրը ի վաճառ հանուեցաւ.

Կիրակի առտուան Պատարագէն ետք, զոր կատարեց Տ. Թորգոմ Սրբազան, ժամը ճին սկսաւ հանդէսը վանքին առջեւ հարթ եւ ընդարձակ կալատեղիին մէջ, որ շքեղապէս զարդարուած էր եւ որուն ճակատը զետեղուած էին Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի ու Արզար դպիրի մեծադիր պատկերները՝ կանաչներու եւ գոյնզգոյն դրօշակներու մէջտեղ. Յաջորդաբար տեղի ունեցան հինգ բանախօսութիւններ՝ նիւթ ունենալով Հայ զիրերու գիւտը, Հայ տպագրութիւնը, Արզար դպիրի կեանքն ու գործը, Հայ գրի եւ տպագրութեան ազդեցութիւնը՝ Հայ քաղաքակրթութեան վրայ, եւայլն. Բանախօսներն էին Տ. Թորգոմ Եպիսկ., Տ. Շաւարշ Ծ. Վրդ., Յովհ. Գազանճեան, Լեւոն Փասպանեան եւ Կարապետ Ապանեան. Իւրաքանչիւր բանախօսութենէ վերջ՝ տեղի կ'ունենային երգեր Ազգ. Վարժարանի երգեցիկ խումբին կողմէ, դարձնալ երգեր, խաղեր, Արեւելեան եւ Եւրոպական պարեր Մանկապարտէզի երկսեռ քաջավարժ մանուկներու կողմէ՝ առաջնորդութեամբ իրենց վարժուհիին՝ Օր. Նարգուհի ձէզվէճեանի, ինչ որ խիստ հաճելի տպաւորութիւն թողուց՝ ներկաներու վրայ. — Իրիկուան դէմ Խաչվերացի արարողութիւնը մեծահանդէս կատարուեցաւ բացեթեայ եւ զիշերը վանքին մէջ պաշտօնական սեղան տրուեցաւ 50է աւելի հրաւիրեալներու. Բաժակաճառեր արտատանուեցան էջմիածնի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսներուն, Կ. Պօլսոյ Պատրիարքին եւ այլ պաշտօնական անձերու եւ մարմիններու կինաց. Սեղանը վերջացաւ խիստ ոգեւորեալ տրամադրութիւններու մէջ, որմէ յետոյ՝ ներկաներու խումբը թափօր կազմելով եւ երգերով ու ջահաժառութեամբ զնաց վանքին կալատեղին. Այնտեղ եւս մինչեւ կէս զիշեր տեղի ունեցան հրախաղութիւններ եւ ժողովրդային խաղեր, պարեր, նուագածութիւն ու խրախճանութիւններ, Այսպէս վերջացաւ հանդէսը եւ հետեւեալ օրը ժողովուրդը ցրուեցաւ հաճելի յիշատակ մը տանելով իր հետ. — Գնահատութեան եւ շնորհակալութեան արժանի են Առաջնորդ Ս. Հօր, Յօրելեանական Մասնախումբին, ինչպէս նաեւ Ս. Յովհ. Ոսկերերան վանքի Հոգաբարձութեան ջանքերը այս հանդէսին յաջող պատրաստութեան մէջ.

Ք. Ա. Ա. Ի. Յ.